

ՍՈՒՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1958թ. մարտի 2-ին Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքում:

Սովորել է Երևանի թիվ 122 միջնակարգ դպրոցում:

1975-1979թթ. սովորել է Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումում:

1979 - 1981թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1981թ. աշխատանքի է ընդունվել Սպանդարյան շրջանի թիվ 3 ԲՇՏ-ում որպես ավագ ինժեներ:

2000թ. ավարտել է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի տնտեսագիտակառավարչական բաժինը:

Մասնագիտությամբ տնտեսագետ է:

1996, 1999, 2002, 2005, 2008 թվականներին հինգ անգամ անընդմեջ ընտրվել է Կենտրոն համայնքի ավագանու անդամ:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

Հայաստանի ավագանիների ասոցիացիայի խորհրդի անդամ է:

Որպես խորհրդական՝ մի քանի անգամ ընդգրկվել է ամերիկյան <<Ուրբան>> ինստիտուտի ծրագրերում:

2001թ. Հայաստանի համայնքների ներկայացուցիչների համար անցկացված դասընթացներում դասախոսել է <<Բյուջետավարում և ֆինանսական կառավարման քաղաքականություն>> թեմայով:

2008թ. ընտրվել է <<Կենտրոն-1>> համատիրության նախագահ-կառավարիչ:

1976թ. դարձել է ԽՍՀՄ հեծանվային սպորտի վարպետ:

2010 թվականին պարգևատրվել է <<Զինվոր հայրենյաց>> մեդալով:

2011 թվականին պարգևատրվել է <<Անկախություն>> մեդալով՝ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար:

Տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծման 15-ամյա հորելյանի կապակցությամբ պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի պատվո մեդալով:

ՀՀԿ անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

